

**ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԻՄ ՔԱՅԼԸ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԱՍՍԱՏՐՅԱՆԻՆ**

Ի պատասխան Զեր 19.06.2020թ. հ.20/60804 գրության՝ տեղեկացվում է, որ

1. Կորոնավիրուսային հիվանդությունը դասվում է օդակաթիլային ճանապարհով փոխանցվող հիվանդությունների շարքին: Ինչպես գրիպի և ՄՇՎ-ի սեզոնային դեպքերի հիվանդացության թվերի բարձրացման շրջանում, այնպես էլ COVID-19 վարակի դեպքում պոլիկլինիկաները բացառապես առաջնորդվում են ՀՀ առողջապահության նախարարի՝ 08.10.2019թ. հ.2868-Ա հրամանով հաստատված սանիտարահիգիենիկ նորմերով և կանոններով: Կապված ստեղծված իրավիճակի հետ և հիմնվելով ՀՀ պարետի ցուցումների և ՀՀ ԱՆ հրամանների վրա՝ պոլիկլինիկաներում իրականացվել են և մինչ օրս էլ իրականացվում են վարակի կանխարգելմանն ու տարածմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:

Նոր COVID-19 համաճարակով պայմանավորված՝ քաղաքապետարանի աշխատակազմի առողջության անվտանգության ապահովման գործընթացը կազմակերպվում է՝ առաջնորդվելով քաղաքապետի 17.03.2020թ. հ.1007-Ա և 19.06.2020թ. հ.1898-Ա որոշումներով:

2. Քաղաքապետարանի, վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերում, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայությամբ գործող բոլոր կազմակերպություններում մինչ օրս ընդհանուր հիվանդացածների, ինչպես նաև ներկա պահին հիվանդների թվի և մահվան էլքով դեպքերի քանակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և ամփոփելու իրավասություն քաղաքապետարանը չունի:

3. Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին ձեռք են բերվել և Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիվանդանոցային և արտահիվանդանոցային, այդ թվում՝ շտապ օգնության ծառայություններ մատուցող թվով 30 ընկերություններին տրամադրվել են բժշկական նշանակության ապրանքներ և ձեռքերի ախտահանիչ միջոցներ.

- Եռաշերտ բժշկական դիմակ - 49900 հատ,
- Ձեռքերի ախտահանիչ միջոց - 550 լիտր,
- Բժշկական ոչ ստերիլ ձեռնոց - 45000 հատ,
- Միանվագ օգտագործման խալաթ /ոչստերիլ/-17000 հատ:

Միաժամանակ նոր կորոնավիրուսի համաճարակի դեմ պայքարում համագործակցության շրջանակներում Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից Երևանի քաղաքապետարանին տրամադրվել է հումանիտար օգնություն, որը հասկացվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիվանդանոցային և արտահիվանդանոցային ընկերություններին.

- Բժշկական դիմակ - 38700 հատ,

• Բժշկական ոչ ստերիլ ձեռնոց - 17000 հատ,

• Արտահագուստ-500հատ:

Հաշվի առնելով բուժաստատություններում անհատական պաշտպանիչ միջոցների պահանջարկի կտրուկ ավելացումը՝ միաժամանակ դիմել ենք ՀՀ առողջապահության նախարարություն՝ հնարավորության սահմաններում օժանդակություն ստանալու նպատակով: Արդյունքում Երևանի քաղաքապետարանին տրամադրվել են հետևյալ ապրանքները, որոնք էլ հատկացվել են ենթակա առողջապահական ընկերություններին.

• Բժշկական ոչ ստերիլ ձեռնոց - 59000 հատ,

• Դիմակ բժշկական – 24790 հատ,

• Պաշտպանիչ ակնոց – 4200 հատ,

• Պաշտպանիչ դիմակ – 200 հատ,

• Միանվագ օգտագործման խալաթ /ոչ ստերիլ/ - 17965 հատ,

• Բախիլ - 2000զույգ,

• Արտահագուստ - 35000 հատ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը ստուգումներ է իրականացրել Երևանի քաղաքապետարանում և վիճակը գնահատել գերազանց:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ